ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 1-3-րդ հարցերին.

«...Եվ նախարարական ցեղերի միջից վերացնում է այս երկու բանը. առաջին՝ խնամությունը մերձավոր ազգականների միջև..., և երկրորդ՝ որ մեռածների վրա ոճիրներ էին գործում հեթանոսական սովորությամբ...»:

1	**Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.**

1) Ագաթանգեղոս
2) Մովսես Խորենացի
3) Փավստոս Բուզանդ
4) Կորյուն

2	**Ո՞ր աշխատությունից է մեջբերված հատվածը.**

1) «Հիշատակարան»
2) «Վարք Մաշտոցի»
3) «Ս. Գրիգորի վարքը»
4) «Հայոց պատմություն»

3	**Ու՞մ գործունեության մասին է հիշատակվում մեջբերված հատվածում.**

1) Ս. Մեսրոպ Մաշտոց
2) Ս. Սահակ Պարթև
3) Ս. Ներսես Մեծ
4) Ս. Գրիգոր Լուսավորիչ

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 4-6-րդ հարցերին.

«Նարեկավանքը հիմնադրվել է 10-րդ դարում ---- կաթողիկոսի ժամանակ՝ Բյուզանդիայից հալածված և Հայաստան գաղթած հայ վանականների կողմից: ... Այստեղ է ժամանակին ստեղծագործել նաև հայտնի պատմիչ Ուխտանեսը: Ավանդության համաձայն՝ այստեղ է ամփոփված եղել նաև ---- աճյունը: Նարեկավանքը վերջնականապես ավերվել է 1896 թ. քրդական ավազակախմբի կողմից, որոնք սպանել են վանահորը, 12 վանականների և թալանի ու կողոպուտի ենթարկել վանքը»:

4 **Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.**

1) Նորայր արքեպիսկոպոս Պողոսյան
2) Կյուրեղ Քիպարյան
3) Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան
4) Ստեփան Մելիք-Բախշյան

5 **Ո՞ր կաթողիկոսի օրոք է հիմնադրվել Նարեկավանքը.**

1) Անանիա Ա. Մոկացի
2) Խաչիկ Ա. Արշարունեցի
3) Սարգիս Ա. Սևանցի
4) Հովհաննես Ե. Դրասխանակերտցի

6 **Ըստ ավանդության ո՞ւմ աճյունն է ամփոփված եղել Նարեկավանքում.**

1) Սուրբ Ներսես Մեծի
2) Սուրբ Ստեփանոսի
3) Սուրբ Հակոբ Մծբնայի
4) Սուրբ Տրդատ Մեծի

7 **Մեջբերված հատվածում ո՞ր ուսուցչապետի ջանքերով է հիմնադրվել Գլաձորի համալսարանը.**

«Նրա հիմնադրման թվականը ստույգ հայտնի չէ, բայց հավանական է, որ այն հիմնադրվել է 1280 ական թվականներին ---- հայտնի ուսուցչապետի ջանքերով: Գլաձորի համալսարանը միջնադարում հայտնի է եղել որպես «երկրորդ Աթենք», «մայրաքաղաք իմաստունների» և այլն»:

1) Ներսես Մշեցի
2) Եսայի Նչեցի
3) Ս. Գրիգոր Տաթևացի
4) Հովհան Որոտնեցի

8 **Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.**

«...Պարզ է, որ աստղը չէ պատճառը ինչպես թագավորության, այնպես էլ հզորության կամ հարստության, մանավանդ որ տեսնում ենք հարուստներին աղքատացած և աղքատներին՝ հարստացած: Մի՞թե այն էլ կարող են ասել, որ միևնույն աստղը կարող է և՛ հարստության ու աղքատության, և՛ զորեղության ու անզորության պատճառ լինել, քանի որ հզորներին ևս տեսնում ենք հաճախ անզորացած ու անզորներին՝ զորեղացած, ինչպես և չարերին՝ խելոքացած, խելոքներին՝ չարացած ...»:

1) Անանիա Շիրակացի
2) Եզնիկ Կողբացի
3) Ս.Դավիթ Անհաղթ
4) Ս.Գրիգոր Տաթևացի

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 9-րդ և 10-րդ հարցերին.

«Սուրբ Հոգին սրան մատնացույց արեց՝ նստելու իր նախահայր սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռին, դրա համար էլ նա, հեզությամբ և ամենայն արդարությամբ օժտված մարդը, երկրորդ --- անունն ստացավ: Հրաժարվելով աշխարհիկ կյանքից՝ նա (մտածեց) հավիտենական կյանքի մասին. լուսավորեց Հայաստանը բազում և տարբեր մեկնություններով, բոլոր լեզուներից թարգմանություններ կատարեց և Աստծո եկեղեցին լցրեց աստվածային սուրբ գրքերով:
Նա հայոց ժողովրդի մեջ պայծառացրեց վանական դասը, նա էր, որ վերականգնեց սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռը Հայաստանում և փայլեց սրբությամբ և ամենայն պարկեշտությամբ: Նա պահեցող էր և աղոթող»:

9 **Հայոց ո՞ր նշանավոր կաթողիկոսի մասին է խոսքը.**

1) Ս. Ներսես Դ. Շնորհալի
2) Գրիգոր Բ. Վկայասեր
3) Գրիգոր Դ. Տղա
4) Գրիգոր Գ.Պահլավունի

10 **Ո՞ր պատմիչի աշխատությունից է մեջբերված հատվածը.**

1) Կիրակոս Գանձակեցի
2) Թովմա Մեծոփեցի
3) Մատթեոս Ուռհայեցի
4) Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 11-րդ և 12-րդ հարցերին.

«Եվ դրանից հետո նա՝ ըստ ավետարանական կանոնի, դարձավ մարդասեր աստծու ծառայությանը, այնուհետև մերկացավ [իրենից] իշխանական ցանկությունները և պարծանքի խաչն առնելով՝ դուրս եկավ ամենակեցույց խաչվածի հետից: Եվ [հավատքի] հրամաններին հավանելով՝ խառնվեց Քրիստոսի խաչակիր գնդին ու շուտով մտավ միայնակեցական կարգի մեջ: Շատ և տեսակ-տեսակ վշտակեցություններ կրեց ըստ Ավետարանին ամեն բանով. իրեն տալիս էր ամեն հոգևոր վարժությունների — միանձնության, լեռնակեցության, քաղցի ու ծարավի և բանջարաճաշակության, անլույս արգելարանների, խարազնազգեստ ու գետնատարած անկողինների:... Եվ մի քանիսին ևս գտել, հարեցրել էր իրեն՝ աշակերտ դարձնելով նույն սովորական ավետարանությանը:
Եվ այսպես նա կամայական քաջությամբ տանելով բոլոր վրա հասած փորձությունները և պայծառանալով՝ ծանոթ և հաճելի էր դարձել աստծուն և մարդկանց»:

11 **Ո՞ւմ աշխատությունից է մեջբերված հատվածը.**

1) Ագաթանգեղոս
2) Եղիշե
3) Մովսես Խորենացի
4) Կորյուն

12 **Ո՞ւմ գործունեությունն է ներկայացված մեջբերված հատվածում.**

1) Ս. Մեսրոպ Մաշտոց
2) Ս. Ներսես Մեծ
3) Ս. Գրիգոր Լուսավորիչ
4) Ս. Սահակ Պարթև

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 13-րդ և 14-րդ հարցերին.

«Եթե մեկը քեզանից խնդրում է և տալիս ես, շնորհակալ եղիր Աստծուն, որովհետև դու ավելին շահեցիր, քան նա՝ խնդրողը»:

13 **Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը.**

1) Դավիթ Անհաղթ
2) Գրիգոր Տաթևացի
3) Եզնիկ Կողբացի
4) Մխիթար Գոշ

14 **Ո՞ր աշխատությունից է մեջբերված հատվածը.**

1) «Դատաստանագիրք Հայոց»
2) «Գիրք հարցմանց»
3) «Իմաստասիրության սահմանումները»
4) «Եղծ աղանդոց»

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 15-17-րդ հարցերին.

« ---- գնում է տեսնելու Շեյխի որդի Հիսեին /Իսա Իբն Շայխ/ եւ նրա կողմից մեծ պատվի է արժանանում. վերջինս նրան տալիս է շատ պարգևներ, նաև դրոշակ՝ վրան խաչ դնելու և դրանով միշտ իր մոտ մտնելու համար: ...»:

15 **Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.**

1) Կիրակոս Գանձակեցի
2) Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ
3) Վարդան Արևելցի
4) Մատթեոս Ուռհայեցի

16 **Ո՞ր աշխատությունից է մեջբերված հատվածը.**

1) «Հայոց պատմություն»
2) «Ժամանակագրություն»
3) «Պատմություն»
4) «Տիեզերական պատմություն»

17 **Հայոց ո՞ր կաթողիկոսի մասին է հիշատակվում մեջբերված հատվածում.**

1) Զաքարիա Ա. Ձագեցի
2) Հովհաննես Ե. Դրասխանակերտցի
3) Գևորգ Բ. Գառնեցի
4) Մաշտոց Ա. Եղիվարդեցի

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 18-րդ և 19-րդ հարցերին.

«Նախահայրերով եւ անցյալով պարծենալու մենք էլ իրավունք ունենք, սակայն միթե մեր նախնինքն ու մեր անցյալը կարող են մեզ օգնել, երբ մենք զուրկ ենք նոցա առաքինություններից: Ո՛չ մեր նախնյաց հայրենասիրությունը, ո՛չ նոցա հավատն ու երկյուղածությունը և ո՛չ էլ նոցա անձնվիրվածությունն ունինք: Ո՛չ անցյալի փառքը, ո՛չ էլ ներկայի մարդկային ուժը կարող են օգնել մեզ, եթե ի վերուստ օգնություն չիջնէ մեզ վրա, դրսից չէ՛, որ գալիս է ազատությունը մեր ժողովրդի համար, այլ՝ ներսի՛ց, աստվածային ճշմարտության ուժն է, որ վերածնում է ժողովրդի հոգին և բերում նրան ազատության»:

18 **Հայոց ո՞ր կաթողիկոսն է մեջբերված խոսքերի հեղինակը.**

1) Գևորգ Ե. Սուրենյանց
2) Խորեն Ա. Մուրադբեկյան
3) Գևորգ Զ. Չորեքչյան
4) Վազգեն Ա. Պալճյան

19 **Նշվածներից ո՞ր իրադարձությունն է տեղի ունեցել վերոնշյալ կաթողիկոսի աթոռակալության տարիներին.**

1) Հինգուկեսդարյա ընդմիջումից հետո հայոց անկախ պետականության վերականգնումը
2) Հայկական հողերը Թուրքիայից հետ ստանալու խնդրանքով, Խորհրդային Միության, ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարություններին ուղղված, Հայոց կաթողիկոսի կոնդակի հղումը
3) Աստվածաշնչի ամբողջական տարբերակի աշխարհաբար թարգմանությունը
4) VII դարի կառույց Երևանի Սուրբ Կաթողիկե եկեղեցու քանդումն ու ոչնչացումը

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 20-րդ և 21-րդ հարցերին.

«Չկա ոչինչ, որ կարելի չլինի բացատրել, և չկա ոչինչ, որ անմատչելի լինի բանականությանը»:

20 **Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը.**

1) Դավիթ Անհաղթ
2) Գրիգոր Տաթևացի
3) Եզնիկ Կողբացի
4) Անանիա Շիրակացի

21 **Ո՞ր դարում է ապրել և ստեղծագործել վերոնշյալ խոսքերի հեղինակը.**

1) V դար
2) V - VI դարեր
3) VII դար
4) XIV դար

22 **Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը.**

«Ի՞նչն է լինելու մեր կյանքի նշանաբանը:
...Դժվարությունների առաջ ծնկե՞լ, թե՞ այդ դժվարությունները հերոսաբար հաղթահարել: Դժվարությունները մերն են, և դժգոհությամբ չենք կարող նրանցից զերծ մնալ ու խուսափել: Դժվարությունները կարող ենք հաղթահարել ոգի և կամք դրսևորելով:
... Տեսա, որ մեր կյանքի դժվարությունները մեծապես հետևանք են առ Աստված մեր ունեցած հարաբերության և դեպի Աստված ունեցած մեր կեցվածքի: Կյանքն օր օրի դժվարանում է և ոչ ուրիշի մեղքով. բացառաբար մեր մեղքով: Քանզի մեր ճանապարհը չի առաջնորդում մեզ դեպի Աստված: Փորձենք մեր կյանքը կազմակերպել՝ Աստծուն և աղոթքին ապավինած»:

1) Գևորգ Ե. Սուրենյանց
2) Վազգեն Ա.Պալճյան
3) Գարեգին Ա. Սարգսյան
4) Գարեգին Բ. Ներսիսյան

23 **Հայոց ո՞ր կաթողիկոսն է ազգը բնութագրող հետևյալ խոսքերի հեղինակը.**

«Ազգ Յաբեթեան եւ Թորգոմեան նաեւ Աբրահամեան, վաղահաս պտուղք Բարդուղիմէոսեան եւ Թադէոսեան, լուսածնունդ զաւակք Սուրբ էջմիածնեայն եւ Գրիգորեայն՝ առանց ամենայն տարակուսանաց եւ հակառակութեանց հայք են եւ ասին:

Ազգք տոհմիւ օրհնեալ.
Երկրաւ բարեբանեալ.
Լեզուաւ կանխազարդեալ.
Գրով բարգաւաճեալ.
Հաւատով ազնուացեալ.
Անուամբ ճոխացեալ.
Առաքինութեամբ բարեպաշտեալ.
Ի Տէր պարծեցեալ.
Եւ զնմանէ գոհացեալ.
Եւ Աստուածաշունչ գրոց քարոզեալ»:

1) Աղեքսանդր Ա. Ջուղայեցի
2) Աբրահամ Գ. Կրետացի
3) Ղազար Ա. Ջահկեցի
4) Մովսես Գ. Տաթևացի

24 **Ո՞վ է Նիկոլայ II կայսրին այս խոսքերով ներկայացրել արևմտահայության ծանր վիճակը.**

«Իմ հոտը Թուրքիայում, մանավանդ բնիկ հայկական գավառներում, աննախընթաց տառապանքների մեջ է: Ընդդեմ Փոքր Ասիայի հայ բնակչության ստեղծված է խաղաղ ոչնչացման մինչև այժմ չտեսնված մի համակարգ: Արդարադատության բացակայությունը, կառավարության կողմից հայ ժողովրդի արդարացի պահանջների լրիվ անտեսումը նրան հանձնել են անբարեխիղճ աստիճանավորների, քուրդ բեգերի և համիդիե հեծելազորի լիակատար իշխանությանը: ...»:

1) Գևորգ Դ.Կոստանդնուպոլսեցի
2) Մկրտիչ Ե. Խրիմյան
3) Ներսես Վարժապետյան
4) Մակար Ա. Թեղուտեցի

25 **Ընտրել տերմինների և հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

ա) Նորակառույց կամ վերանորոգված եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը կոչվում է հիմնօրհնեք:
բ) Տոնացույցը եկեղեցում կատարվող ծեսերի ամբողջությունն է:
գ) Հաղորդության համար օգտագործվող, վրան խաչի պատկերով, կլոր հացը կոչվում է բաղարջ:
դ) Հիսուս Քրիստոսի անձեռակերտ դիմանկարը հայտնի է «Տիրոջ դաստառակ», «Փրկչի կենդանագիր պատկեր» և այլ անուններով:
ե) Հոգևոր աստիճանների ամբողջական համակարգը կոչվում է եպիսկոպոսություն:
զ) Ճգնավորը մենակյաց անապատականն է, ով հրաժարվել է աշխարհիկ կյանքից ու վայելքներից:
է) Մարտիրոս հունարեն նշանակում է վկա. այսպես են կոչում նրանց, ովքեր նահատակվել են՝ վկայելով իրենց հավատը Քրիստոսի հանդեպ:
ը) Եկեղեցու տարածքային-վարչական միավորը կոչվում է քահանայապետություն:

1) ա, գ, դ
2) բ, ե, զ
3) դ, զ, է
4) գ, է, ը

26 **Ստորև թվարկվածներից ո՞ր երեքը Վազգեն Ա. Պալճյանի պատգամներից չեն.**

ա) Մեր հավատքն անցել է հրի և սրի միջով: Մեր հավատքը մշտապես հաղթություն է պարգևել մեզ, որովհետև մենք հավատացել ենք Ավետարանի խոսքի ճշմարտությանը՝ թե «Որ հաւատասցէ իսպառ, նա կեցցէ»:
բ) Հայրենասիրությունը բանաձևելու կարիք չունի. նրանով պիտի ապրես, գործես, արարես:
գ) Կա մեկ հայ ժողովուրդ, կա մեկ Հայ Հայրենիք, կա մեկ ճակատագիր, հետևաբար կա մեկ կամեցողություն և գործելու մեկ ուղղություն:
դ) Երբ մի ժողովուրդ կանգնած է մնում անցյալի ժառանգության վրա առանց ներկա լիությամբ ու ստեղծագործորեն ապրելու, առանց նոր խոսք ասելու,

առանց նոր արժեքներ ստեղծելու նոր ժամանակների տարազով, այդ ժողովրդի առաջ փակվում են դեպի ապագա տանող դռները:

ե) Քայլ պահենք աշխարհին հետ, առանց սակայն մեր ճամբէն դուրս գալու:

զ) Երանի այն երիտասարդներին, որոնք գիտեն՝ ի՛նչ կարդալ, ե՛րբ կարդալ և ինչքա՛ն կարդալ:

է) Հայրենիք ստեղծելը հերոսություն է, հայրենիք շենացնելը՝ առաքինություն:

1) ա, ե, զ
2) ա, բ, ե
3) բ, գ, դ
4) գ, դ, է

27 **Հոգևոր բարեպաշտական սովորույթների վերաբերյալ բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

ա) Հոգեհանգստյան արարողության վերջում՝ «Քրիստոս որդի Աստուծոյ» աղոթքի ընթացքում, հիշատակվում են ննջեցյալների անունները:

բ) Խաչակնքումը կատարվում է ձախ ձեռքի երեք մատները միացրած, ինչը խորհրդանշում է Քրիստոսի մեջ կատարյալ Աստծո և կատարյալ մարդու անբաժան միությունը:

գ) Անդաստանի արարողության ժամանակ հոգևոր դասը խաչով, խաչվառով և Ավետարանով երգելով օրհնում է աշխարհի չորս կողմերը:

դ) Մոմավառությունը պատարագի և մյուս ծիսական արարողությունների ընթացքում Աստծուն երկրպագելու արարողությունն է:

ե) Գրիգոր Լուսավորչի ժամանակներից սկսած՝ մատաղ էին անում Տերունական և Սրբոց տոներին, ննջեցյալների հիշատակի համար և որպես հոգեհաց բաժանում աղքատներին, ուխտավորներին:

զ) Երկրպագությունը միայն կատարվում է պատարագի այն ընթացքում, երբ երգվում է «Լույս զվարթ» շարականը: Երկրպագելիս խաչակնքվում են և խոնարհվում:

է) Խնկարկությունը խորհրդանշում է առ Աստված բարձրացող աղոթքն ու օրհնությունը:

1) ա, գ, ե
2) բ, դ, զ
3) գ, ե, է
4) դ, զ, է

28 **Հայկական մանրանկարչության վերաբերյալ ստորև տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

ա) Հայ մանրանկարչության առայժմ հայտնի հնագույն նմուշները 989 թ. «Էջմիածնի Ավետարանի» վերջում կցված չորս Տերունական մանրանկարներն են:
բ) Ըստ միջնադարյան աստվածաբան հեղինակների մանրանկարչության մեջ կապույտ գույնը խորհրդանշում է Հիսուս Քրիստոսի աստվածային բնությունը:
գ) Ըստ միջնադարյան աստվածաբան հեղինակների մանրանկարչության մեջ սպիտակ գույնը խորհրդանշում է սրբերի ճգնակեցությունը, նրանց մաքրությունն ու անարատ վարքը:
դ) Ըստ միջնադարյան աստվածաբան հեղինակների մանրանկարչության մեջ կանաչ գույնը խորհրդանշում է աստվածային անհասանելի բնությունը:
ե) Հայկական մանրանկարչության առավելագույն վերելքի ժամանակաշրջան են համարվում XVII-XVIII դարերը:
զ) Սուրբ Ծննդյան թեմաներով մանրանկարներում, մանկական խանձարուրի տակ հաճախ ներկայացված է լինում կնոջ գլուխ՝ «Մարիամի գլուխ» մակագրությամբ:
է) «Էջմիածնի Ավետարանի» վերջում կցված երկու թերթերի Տերունական մանրանկարների հնությունը հասնում է VI դար:
ը) Հայկական մանրանկարչությունը, որպես ձեռագիր գրքի հարդարանք, պատկերազարդում, սկզբնավորվել է V-VI դարերում:

1) ա, գ, ե
2) բ, դ, է
3) դ, ե, զ
4) զ, է, ը

29 **Մայիսյան հերոսամարտերի վերաբերյալ ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա) «Մահապարտներ» անունը ստացած գունդը ազատագրեց Բյուրականը:
բ) Դարպաս գյուղի քահանա տեր Կոմիտաս Սարգսյանը, համախմբելով մի քանի գյուղերի բնակիչների, դիմադրություն կազմակերպեց Ղարաքիլիսայի

մատույցներում:

գ) Դրաստամատ Կանայանի (Դրո) ղեկավարությամբ գործող հինգերորդ գունդը ազատագրեց Երևանը:

դ) Հայկական զորամասերի մարտական ոգին բարձրացնելու նպատակով 1918 թ. գարնանը ռազմաճակատ մեկնեցին Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը և Զավեն եպիսկոպոս Մահտեսի-Բաբայանը:

ե) Նկատի ունենալով Մայր Աթոռին սպառնացող վտանգը՝ Հայկական զորքերի հրամանատարությունը դիմեց Գևորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսին, Բյուրական տեղափոխվելու խնդրանքով:

զ) Բաշ Ապարանի ճակատամարտում Տեր Հովհաննեսի և Տաճատ քահանայի կազմակերպած աշխարհազորային ջոկատները առաջինը դիմագրավեցին թուրքական զորքերի հարձակմանը:

է) 1918 թ. մայիսի 10-15-ը հայոց կամավորական շարժման ղեկավար Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը «Մահապարտներ»-ի գնդով մարտնչում էր Սարդարապատի մատույցներում:

ը) Էջմիածնի միաբան Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը 1918 թ. մայիսի 18 -ին հանդիպեց թուրքական զորքերի հրամանատարության հետ:

1) ա, զ, է, ը
2) ա, բ, գ, է
3) բ, դ, ե, զ
4) գ, դ, ե, ը

30 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառ կամ հետևանք.**

ա) Հակահասունյանների նկատմամբ թուրքական կառավարության վարած քաղաքականության պատճառով նրանց բոլոր եկեղեցիները հանձնվեցին Անտոն Հասունյանին:

բ) Եկեղեցի-պետություն «դաշնագիրը» չիրականացավ Եղբայրական օգնության Էջմիածնի կոմիտեի գործունեության դադարեցման պատճառով:

գ) Հայոց եկեղեցու և ժողովրդի պայքարի արդյունքում 1905 թ. օգոստոսի 1-ին, Նիկոլայ II ցարի հրովարտակով, Հայոց եկեղեցուն վերադարձվեցին նրանից բռնագրավված գույքը և դրամը:

դ) Մայր Աթոռի բողոքների արդյունքում թուրքական կառավարությունը 1829 թ. ոչ միայն արգելեց կաթոլիկ միսիոներների քարոզչությունը հայերի

շրջանում, այլև հայ կաթոլիկներին ևս աքսորեց:

ե) «Հայոց եկեղեցու կանոնադրության» Թիֆլիսյան տարբերակը հավանության արժանացավ և անմիջապես հաստատվեց ցարի կողմից, քանի որ այն համապատասխանում էր և՛ ցարական բարձրագույն իշխանության ցանկությանը, և՛ Հայոց եկեղեցու հնավանդ ծեսերին և կանոններին:

զ) XIV դարի առաջին կեսին բողոքական քարոզիչների Նախիջևանի մի շարք բնակավայրերում հաստատվելու պատճառով, Նախիջևանը դարձավ բողոքական եպիսկոպոսության նստավայր:

է) Ներսես Աշտարակեցու գործունեության շնորհիվ վերականգնվեցին կանոնավոր հարաբերությունները Մայր Աթոռի և Կ.Պոլսի պատրիարքության միջև:

1) ա, գ, է
2) ա, գ, զ
3) բ, դ, է
4) դ, ե, զ

31 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառ կամ հետևանք.**

ա) Կաթողիկոս ընտրվելու կապակցությամբ Գևորգ Զ Չորեքչյանը Ստալինից նվեր է ստանում խորհրդային մակնիշի մարդատար մեքենա:

բ) 1801 թ. նորընտիր կաթողիկոս Հովսեփ Արղության-Երկայնաբազուկի Թիֆլիսում հանկարծամահ լինելու հետևանքով, կաթողիկոսական աթոռը դառնում է պայքարի առարկա:

գ) Ներես Աշտարակեցուն՝ ռուսական զորքերին ցույց տված ծառայությունների համար, Պասկևիչի միջնորդությամբ շնորհվում է Ս. Ալեքսանդր Նևսկու շքանշան:

դ) XIX դարում Կաթոլիկ եկեղեցու կողմից ինը աստիճանների հարցի բարձրացումը պատրվակ հանդիսացավ Հայոց եկեղեցու անկախության նկատմամբ ոտնձգություններ կատարելու համար:

ե) Սփյուռքահայերի խնդրանքը հաշվի առնելով 1938 թ. օգոստոսին ՀԿ(բ)Կ կենտկոմը հրաժարվեց Ս. Էջմիածինը փակելու մտադրությունից:

զ) 1922 թ. կազմված ժամանակավոր «դաշնագրի» արդյունքում կարգավորվեց Մայր Աթոռի լիազոր ներկայացուցիչ ունենալը ՀՀ կառավարությունում:

է) Հայաստանի ժողկոմխորի 1921 թ. փետրվարին ընդունված որոշման

արդյունքում Էջմիածնի վանքից գանձվող եկամտահարկի չափն անցնում էր 120 հազար ռուբլուց, այն դեպքում, երբ վանքի տարեկան եկամուտը կազմում էր 40-50 հազար ռուբլի:

ը) Նկատի ունենալով Մեծ Եղեռնի և հետագա ողբերգական իրադարձությունների պատճառով հայ ժողովրդի քանակական մեծ կորուստները, Գևորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսը ավելացրեց պսակադրության օրերը, արտոնեց քահանաների վերամուսնությունը և այլն:

1) ա, բ, գ, ը
2) ա, գ, զ, է
3) բ, դ, ե, է
4) դ, ե, զ, ը

32 **Հայոց կաթողիկոսների անունները դասավորել ըստ նրանց գահակալության ժամանակագրական հաջորդականության.**

ա) Ս. Հովսեփ Ա. Հողոցմեցի
բ) Ս. Ներսես Ա. Պարթև
գ) Մովսես Ա. Մանազկետցի
դ) Ս. Հովհաննես Ա. Մանդակունի
ե) Ս.Գյուտ Ա. Արահեզացի
զ) Ս. Սահակ Ա. Պարթև
է) Փառեն Ա. Աշտիշատցի
ը) Բաբգեն Ա. Ոթմսեցի
թ) Շահակ Ա. Մանազկերտցի

1) բ, է, թ, ա, զ, գ, ե, ը, դ
2) է, բ, թ, զ, ա, գ, ե, դ, ը
3) է, թ, բ, զ, ե, ա, դ, գ, ը
4) թ, է, բ, զ, ա, ե, գ, ը, դ

33 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված կրթամշակութային իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը.**

ա) Կ.Պոլսի Սկյուտարի հայոց ճեմարանի բացումը

բ) Տաթևի համալսարանի հիմնումը
գ) Վազգենյան դպրանոցի հիմնումը
դ) Օշականում Մ. Մաշտոցի անվան դպրատան կառուցումը
ե) Գևորգյան ճեմարանի հիմնումը
զ) Գլաձորի համալսարանի հիմնումը
է) Վենետիկում Մխիթարյան դպրոցի հիմնումը
ը) Ներսիսյան դպրոցի բացումը
թ) Արմաշի դպրեվանքի հիմնումը

1) ը
2) ե
3) թ
4) ա

34 **Հայոց եկեղեցու տոները դասավորել ըստ նրանց տոնման ժամանակագրական հաջորդականության.**

ա) Հիսուս Քրիստոսի պայծառակերպության տոն
բ) Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոն
գ) Բուն Բարեկենդան
դ) Համբարձման տոն
ե) Խաչվերացի տոն
զ) Վարագա խաչի տոն
է) Մարիամ Աստվածածնի Վերափոխման տոն
ը) Ծաղկազարդ
թ) Գյուտ խաչի տոն

1) գ, ա, ը, բ, դ, ե, թ, է, զ
2) գ, ը, դ, բ, ա, է, ե, զ, թ
3) ը, դ, գ, ա, ե, բ, թ, զ, է
4) ը, գ, ա, է, ե, դ, զ, թ, բ

35 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում Սմբատ Արծրունու օծումը Հայոց թագավոր

բ) «Օրացույց» և «Սաղմոսարան» գրքերի հրապարակումը Վենետիկում
գ) Միքայել Սեբաստացու կողմից գաղտնի խորհրդաժողովի գումարումը Սեբաստիայի Ս. Աստվածածին Մայր եկեղեցում
դ) Վենետիկի ղեկավարության կողմից Սուրբ Ղազար կղզու շնորհումը Մխիթար Սսեբաստացուն
ե) Նադիրի թագադրության ժամանակ, Աբրահամ Գ. Կրետացի կաթողիկոսի կողմից, շահական իշխանության խորհրդանիշ սրի կապումը շահի մեջքին
զ) Հարություն քահանա Շմավոնյանի կողմից հայկական առաջին պարբերական «Ազդարար»-ի հրատարակումը Մադրասում
է) Պարսից շահ Աբաս Ի-ի կողմից արևելահայ բնակչության բռնագաղթը
ը) Հայերեն առաջին Աստվածաշնչի տպագրությունը
թ) Կիրակոս Վիրապեցու օծումը Ամենայն Հայոց կաթողիկոս

1) ա, գ, թ, է, բ, դ, ը, զ, ե
2) ա, գ, է, բ, թ, դ, ե, զ, ը
3) թ, ա, գ, է, բ, ը, ե, դ, զ
4) թ, ա, գ, բ, է, ը, դ, ե, զ

36 **Թվարկվածներից որո՞նք Հայոց եկեղեցու յոթ մոլություններից չեն.**

1) ագահություն
2) վախկոտություն
3) ժուժկալություն
4) բղջախոհություն
5) ստորություն
6) ծուլություն
7) որկրամոլություն

37 **Ընտրել տերմինների և հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Հայոց հեթանոսական դիցարանում Վահագնը ամպրոպի և կայծակի աստվածն էր:
2) Ըստ զրադաշտական դիցարանի՝ աշխարհը ստեղծել էր Զրադաշտը:
3) Ահուրամազդան մարգարե էր, նա ծնվել էր ներկայիս Իրաքի արևմուտքում:
4) Ըստ Վեդաների՝ արարիչ Բուդդան ծնվել էր Ոսկե ձվից:

5) Հեթանոս հայերի պատկերացմամբ՝ աշխարհը բաղկացած էր երեք մասից՝ Երկինք, Երկիր և Ծով:
6) Հին հայերի կարծիքով խավարի, մահվան, այլ չար ազդեցություն ունեցող ոգիները կոչվում էին չարք, դևք:
7) Վանի թագավորության գլխավոր աստվածը Թեյշեբան էր:

38 **Ընտրել տերմինների և հասկացությունների սխալ բացատրությունները.**

1) Մեսիա նշանակում է Օծյալ:
2) Իսրայելում օրենքի և կրոնական ավանդույթների պահպանությանը նվիրված կրոնավորներին անվանում էին սամարացիներ:
3) Նոր Կտակարանը բաղկացած է 48 գրքերից:
4) Մովսես նշանակում է լուսավորյալ:
5) Հիսուս թարգմանաբար նշանակում է Փրկիչ:
6) Քրիստոս թարգմանաբար նշանակում է Օծյալ:
7) Հովհաննես նշանակում է Աստծո շնորհ:

39 **Ընտրել տերմինների և հասկացությունների սխալ բացատրությունները.**

1) Ջրհեղեղից հետո Աստված ուխտ հաստատեց Նոյի և նրա որդիների հետ, ուխտի նշանը Աստծո և մարդու միջև եղավ ծիածանը:
2) Հին Կտակարանը գրվել է Քրիստոսի Ծննդից առաջ:
3) Հին Կտակարանի գրքերը կոչվում են Ավետարաններ, իսկ հեղինակները՝ ավետարանիչներ:
4) Հայ հին հեղինակները հայերի նախնի Հայկին և նրանից սերված հայերին անվանում էին «Թորգոմածին», «Թորգոմյաններ» «Թորգոմի որդիներ կամ ազգ», իսկ Հայոց երկիրն էլ՝ «Թորգոմի տուն»:
5) Աստվածաշունչը բաղկացած է երկու մասից, առաջին մասը կոչվում է Նոր Կտակարան կամ Նոր Ուխտ:
6) Հայկական լեռնաշխարհից են սկիզբ առել Աստվածաշնչյան չորս գետերը՝ Եփրատը, Տիգրիսը, Գեհոնը, Փիսոնը:
7) Ավետարանները մարդկանց ավետում են Աստծո կողմից մարդկանց համար սահմանված կանոններն ու օրենքները, Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի մասին աշխարհ գալու կանխատեսումները:

40 **Ստորև ներկայացված կաթողիկոսներից ո՞վքեր Պահլավունիների տոհմից չեն.**

1) Խաչիկ Բ. Անեցի
2) Գրիգոր Բ. Վկայասեր
3) Գրիգոր Դ. Տղա
4) Ներսես Դ. Շնորհալի
5) Գրիգոր Զ. Ապիրատ
6) Մեսրոպ Ա. Արտազեցի
7) Կոնստանդին Ա. Բարձրբերդցի

41 **Բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

1) Հայերեն ձեռագրերում գրատեսակները կոչվում են աղյուսակ գիր կամ տախտակագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր:
2) Կցագրությունը բնագրում օգտագործվում էր, երբ մի քանի բառ ձուլվում էին մի տառի շուրջը:
3) Հայոց գրերին Մեսրոպ Մաշտոցը տվեց նաև թվային արժեք՝ համարական կարգով Հայոց այբուբենը բաժանելով 6 մասի:
4) XIII դարում համառոտագրումներին ավելանում է նոտրգիրը:
5) Արձանագրությունների գիրը երկաթգիրն է, նաև հադիպում են բոլորգրով և խառը՝ տարբեր գրատեսակներով գրված գրություններ:
6) Վիմագիր արձանագրությունները իրենց բնույթով բաժանվում են հոգևոր և աշխարհիկ վկայագրերի:
7) Թվագիր առաջին ձեռագիրը Մլքե թագուհու Ավետարանն է, իսկ հնությամբ երկրոդը՝ Լազարյան ավետարանը:

42 **Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

1) Ըստ մեկնության՝ Սերմնացանի առակում ճանապարհը խորհրդանշում է այն մարդկանց, ովքեր լսում են Աստծո խոսքը, բայց ուշադրություն չեն դարձնում:
2) Ըստ մեկնության՝ Որոմների առակում ցորենի սերմերը բարի, իսկ որոմի սերմերը՝ չար մարդիկ են:
3) Որոմների առակում ցորենն ու որոմն առանձնացնելը նշանակում է, որ ամեն մարդ իր գործերի համար արժանի հատուցում պետք է ստանա:

4) Հիսուս Քրիստոսի 12 առաքյալներից է համարվում նաև Մատաթիան, ով ընտրվել է վիճակահանությամբ՝ Հուդա Իսկարիովտացու փոխարեն:
5) Հիսուս Քրիստոսը Հարություն առնլուց հետո 50 օր շրջեց երկրի վրա և այդ ընթացքում բազմիցս երևաց իր աշակերտներին:
6) Հիսուս Քրիստոսը համբարձվեց Թաբոր լեռան վրա:
7) Սիմեոն Կյուրենացին, ով Հիսուս Քրիստոսի հետևորդներից էր Պիղատոս Պոնտացուց Հիսուսի մարմինը խաչից իջեցնելու թույլտվություն խնդրեց:

43 **Հայոց եկեղեցու տոների վերաբերյալ բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Ավետման տոնը նվիրված է Գաբրիել հրեշտակապետի կողմից Մարիամ Աստվածածնին հայտնած լուրին:
2) Վարագա Սուրբ Խաչի տոնը նվիրված է Քրիստոսի խաչափայտի մասունքի հայտնաբերման հիշատակին:
3) Շողակաթի տոնը նվիրված է Մայր տաճարի նավակատիքի հիշատակին:
4) Տյառնընդառաջ նվիրված է քառասնօրյա Հիսուսին տաճար բերելուն:
5) Խաչվերացի տոնը նվիրված է Երուսաղեմի երկնքում խաչանման լույսի երևմանը:
6) Սուրբ Գրիգոր Լուսավորչի մուտն ի Վիրապ տոնը նվիրված է Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքին:
7) Ծաղկազարդի տոնը նվիրված է ծաղիկներով, ձիթենու և ուռենու ճյուղերով զարդարված ճանապարհով դեպի Թաբոր լեռը ուղևորվող Հիսուս Քրիստոսի պայծառակերպությանը:

44 **Ըստ սրբազան ավանդության Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների վերաբերյալ բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Բարդուղիմեոս առաքյալը բժշկել է Աբգար թագավորին և Եդեսիայում հիմնել է եպիսկոպոսական աթոռ:
2) Թադեոս առաքյալի քարոզների շնորհիվ քրիստոնյա են դարձել Սանդուխտ արքայադուստրը, բազում ազնվականներ և հասարակ մարդիկ:
3) Հեր գավառում, Թադեոս առաքյալի նահատակության վայրում, հետագայում կառուցվել է Ս. Թադեի վանքը:
4) Բարդուղիմեոս առաքյալի քարոզչության հիմնական վայրերից է դարձել Սյունյաց նահանգը:
5) Թադեոս առաքյալը Գողթն գավառում կառուցել է եկեղեցի, հիմնել

եպիսկոպոսական աթոռ:

6) Ըստ Մովսես Խորենացու վկայության, Հայաստանում քարոզելու տարիներին, Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները մի քանի անգամ հանդիպել են Օթյաց խաչ կոչվող վայրում:
7) Ըստ սրբոց Ոսկյանք վկաների ավանդության Հռոմի կայսեր կողմից որպես պատգամավորներ Հայաստան ուղարկված 5 արքայազուն իշխանները ճանապարհին հանդիպելով Թադեոս առաքյալին քրիստոնեություն են ընդունել:

45 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառ.**

1) Ս. Հուսիկի մահից հետո նրա երկու որդիները հրաժարվում են հոգևորական ձեռնադրվելուց և մերժում կաթողիկոս դառնալու առաջարկը, որի պատճառով կաթողիկոս է ընտրվում Փառեն անունով մի երեց:
2) Աշտիշատի ժողովը չի աջակցում ճգնավորական շարժմանը, որի պատճառով ճգնավորները լքում են Հայաստանը:
3) Եգիպտական մամլուքների կողմից Շուղրիի Կարմիր վանքի գրավման պատճառով Հայրապետական աթոռը տեղախոխվում է Սիս:
4) Քանի որ Արշակավան քաղաքի կառուցման պատճառով նախարարների մեծ մասը դուրս էր եկել Արշակ թագավորի դեմ, Ներսես Մեծը նախարարներից շատերին արգելում է եկեղեցական արարողությունների ժամանակ մտնել եկեղեցի:
5) Բարսեղ Անեցին իր գահակալության տարիներին միավորված աթոռը չի տեղափոխում Հայաստան, որովհետև կաթողիկոսական աթոռը պետք է գտնվեր հայոց քաղաքական կյանքի կենտրոնում:
6) Կիլիկիայում ապրող հայերի և հույների միջև խաղաղություն հաստատելու նպատակով Ներես Շնորհալին բանակցություններ է սկսում Կիլիկիայի բյուզանդական զորահրամանատարի հետ:
7) Ագաթանգեղոսի վկայությամբ քրիստոնեություն ընդունելու պատճառով Տրդատ արքան ծանր հիվանդանում է:

46 **Ստորև թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառ կամ հետևանք.**

1) Արաբական իշխանությունները չէին հալածում պավլիկյաններին, ավելին՝ խրախուսում էին, քանզի այդ շարժումը խարխլում էր ազգի և եկեղեցու

միասնության հիմքը, բացի այդ էլ՝ երբեմն նրանց ուժերն օգտագործում էին Բյուզանդիայի դեմ պայքարում:

2) 1203 թ. Սիս քաղաքում տեղի է ունենում եկեղեցական ժողով, որն արգելում է հայկական բանակում զինվորներին շրջիկ եկեղեցի և սուրբ սեղան ունենալ:
3) Ղազար Ա. Ջահկեցի կաթողիկոսի անհեռատես քայլերի հետևանքով Նադիր շահը կողոպտում և ավերածությունների է ենթարկում նաև Էջմիածինը:
4) Հայոց եկեղեցին ծանր վիճակից դուրս բերելու և եկեղեցական կյանքը կանոնավորելու նպատակով Վանանդի նախկին թագավոր Գագիկ Կարսեցին 1666 թ. Ծամնդավում ժողով է գումարում:
5) Հակոբ Բ. Անավարզեցի կաթողիկոսը, ճիշտ չգնահատելով քաղաքական իրավիճակը, հատուկ կոնդակով պահանջում է հայոց ծեսերն ու արարողությունները փոփոխել և հարմարեցնել կաթոլիկ եկեղեցու դավանանքին, ծեսերին, արարողություններին:
6) Ծերության պատճառով Սսում մնացած Գրիգոր Թ. Մուսաբեկյանցը հրաժարվում է ընդունել Վաղարշապատի ժողովի որոշումները:
7) Հեթում I թագավորի և մոնղոլների Մանգու խանի միջև կնքած պայմանագրի շնորհիվ հայ եկեղեցին որոշ ժամանակ Զաքարյան Հայաստանում և մոնղոլների նվաճած տարածքներում ազատություն է ստանում և հարկեր չի վճարում:

47 **Ստորև թվարկվածներից որո՞նք պատմական իրադարձությունների իրական պատճառ կամ հետևանք չեն.**

1) Հայոց եկեղեցին թուլացնելու նպատակով Հայհեղկոմի՝ 1920 թ. դեկտեմբերի 17-ի որոշմամբ դպրոցն անջատվեց եկեղեցուց, իսկ երկու օր անց բռնագրավվեցին Մայր Աթոռի շենքերը, ունեցվածքի մեծ մասը:
2) XVIII դարում պապականությունը օգտվելով Հայաստանի և Կիլիկիայի հայոց պետության դժվար կացությունից՝ ձգտում էր իրեն ենթարկել Հայոց եկեղեցին:
3) Քանի որ Հայոց եկեղեցու կանոնադրությունը՝ «Պոլոժենիեն» կարգավորում էր ցարական կառավարության ու Հայոց եկեղեցու փոխհարաբերությունները, Նիկոլայ II-ի հրամանագրով 1836 թ. սինոդը դադարեց գոյություն ունենալուց:
4) Մոսկվա կինոթատրոնը կառուցելու նպատակով 1931-1932 թթ. քանդվեց Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին:

5) Հայերի բարոյական կորովը բարձրացնելու նպատակով 1897 թ. 300 հայ վրիժառուներ կազմակերպեցին պատժիչ գործողություն, որը հայտնի է Խանասորի արշավանք անունով:
6) Ցանկանալով Ներսես Աշտարակեցուն հեռու պահել հայոց պետականության վերականգնման համար մղվող պայքարից, ցարական իշխանությունները նրան որպես թեմի առաջնորդ աքսորեցին Բեսարաբիա:
7) XX դարի 80-90-ական թվականներին Հայաստան մուտք գործած աղանդավորական շարժումները, օգտվելով երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական և բարոյահոգոբանական ծանր վիճակից, միսիոներական ակտիվ գործունեություն ծավալեցին:

48 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից կամ հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

1) Պետրոս Գետադարձ կաթողիկոսը հիմնեց Բջնիի եպիսկոպոսական աթոռը, որը հետագայում հիմք հանդիսացավ Արագածոտնի թեմի համար:
2) Շիրակավանի եկեղեցական ժողովում ընդունված որոշումների պատճառով Հայոց եկեղեցին պառակտվեց:
3) Դվինի 893 թ. կործանարար երկրաշարժի հետևանքով, Գևորգ Բ. Գառնեցի կաթողիկոսը կաթողիկոսարանը տեղափոխեց Զվարթնոց:
4) Արաբական նոր արշավանքների պատճառով 927 թ. Հովհաննես Ե. Դրասխանակերտցի կաթողիկոսը ստիպված կաթողիկոսական աթոռը տեղափոխեց Աղթամար:
5) Քրիստոնեության ամրապնդման և եկեղեցին կրթված հոգևորականներով համալրելու նպատակով Աշտիշատի ժողովում որոշում ընդունվեց եկեղեցիներին ու վանքերին կից բացել դպրոցներ:
6) Ս.Գրիգոր Լուսավորչի գործունեության շնորհիվ քրիստոնեությունը տարածվեց նաև Միջագետքում, Ասորիքում, Վրաստանում:
7) Շահապիվանի եկեղեցական ժողովի որոշումների արդյունքում նեստորականները վտարվեցին Հայաստանից:

49 **Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են ստորև բերված իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Պարսկաստանում գահ են բարձրանում Սասանյանները:
2) Սահակ Պարթևը տեղափոխվում է Հայաստանի արևմտյան հատված և Մեսրոպ Մաշտոցին ուղարկում է Բյուզանդիայի կայսեր մոտ:
3) Ս.Հովհաննես Գ. Օձնեցու նախաձեռնությամբ Դվինում ժողով է գումարվում:
4) Հազարապետ Միրներսեհի ստորագրությամբ գրություն է ուղարկվում Հայաստան, որով քրիստոնեությունը հայտարարվում էր մոլորություն:
5) Վաչագան Բարեպաշտ թագավորի նախաձեռնությամբ Ամարաս են տարվում Ս.Գրիգոր Լուսավորիչի, Ս. Գայանե, Ս. Հռիփսիմե կույսերի մասունքների մի մասը:
6) Անգղ գյուղաքաղաքում, Ղևոնդ երեցի և նրան համախոհ հոգևարականների գլխավորությամբ, ժողովուրդը հարձակվում է մոգերի վրա, երբ վերջիններս փորձում էին քանդել եկեղեցին և այն ատրուշան դարձնել:
7) Վրաց թագավոր Վախթանգ Գորգասարը սպանում է Գուգարքի բդեշխ՝ ուրացող Վազգենին:
8) Մովսես Բ. Եղիվարդեցին պատվիրակներ է ուղարկում Կ.Պոլիս՝ եկեղեցական ժողովին մասնակցելու համար:

50 **Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են ստորև բերված իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Ս. Երրորդություն անունը կրող եկեղեցու հիմնումը Աշտիշատում Ս.Գրիգոր Լուսավորչի կողմից
2) Եկեղեցական արարողություններից մեկի ժամանակ Հայոց հայրապետի կողմից Տիրան արքային եկեղեցի մտնելու արգելումը
3) Հայոց թագավորական ընտանիքի, ավագանու անդամների մկրտությունը Արածանի գետում
4) Մաքսիմիանոս կայսեր կողմից պատերազմի հայտարարումը Հայաստանին
5) Նիկեայի ժողովում ընդունված կանոնների և Նիկեական հավատո հանգանակի հաստատումը Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից
6) Ծոփքի Արքեղայոս իշխանի հրամանով Հայոց հայրապետի սպանությունը
7) Միլանի հրովարտակի ընդունումը
8) Հայոց հայրապետի կողմից թագաժառանգ Տիրանի ուղեկցումը Կ.Պոլիս

51 **Թվարկված եկեղեցական ժողովներից ո՞ր երկուսն են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Նիկեայի տիեզերական ժողովը
2) Դվինի երկրորդ եկեղեցական ժողովը
3) Աշտիշատի ժողովը
4) Աղվենի եկեղեցական ժողովը
5) Կ.Պոլսի տիեզերական ժողովը
6) Եփեսոսի տիեզերական ժողովը
7) Շահապիվանի եկեղեցական ժողովը
8) Արտաշատի ժողովը
9) Շիրակավանի եկեղեցական ժողովը

52 **Ըստ 1836 թ. հաստատված Հայոց եկեղեցու կանոնադրության («Պոլոժենիե»-ի) ի՞նչ իրավունքներ ուներ Հայոց կաթողիկոսը.**

1) Հայոց կաթողիկոսը ճանաչվում էր Հայոց եկեղեցու գլխավոր կառավարիչ և տեսուչ:
2) Կաթողիկոսը՝ Սինոդի համաձայնությամբ կարող էր իշխանությունը, լիազորությունն ու իրավունքները փոխանցել այլ ատյանի կամ անձի:
3) Կաթողիկոսն էր օրհնում մյուռոնը և անվճար բաժանում:
4) Հայոց կաթողիկոսն էր նշանակում և ազատում թեմակալ առաջնորդներին:
5) Կաթողիկոսի բոլոր որոշումներն ու կանոնները ենթակա էին պետական հաստատման:
6) Հայոց հաթողիկոսը «թագավոր-կայսր»-ի համաձայնությամբ ձեռնադրում էր եպիսկոպոսներ, կազմում հիշատակագրեր, հաշվետվություններ, հրատարակում ընդհանրական թղթեր:
7) Հայոց կաթողիկոսն արտասահմանի հայ համայնքների հետ կարող էր հաղորդակցվել միայն ռուսական արտաքին գործերի նախարարության միջոցով:
8) Դավանական և պաշտանմունքային խնդիրների վերաբերյալ վճիռ արձակելու վերջնական իրավունքը վերապահվում էր «թագավոր-կայսր»-ին:

53 **Ընտրել տերմինների և հասկացությունների ճիշտ բացատրությունը.**

1) Հուլիանոս Ուրացող կայսրը 363 թ. պարսիկների հետ կնքել է «Փառահեղ հաշտության» պայմանագիր:
2) Մուհամմադի հիմնած նոր կրոնը «Իսլամը» թարգմանաբար նշանակում է «հպարտություն, քաջություն»:
3) Հատու և վճռական խոսքերի համար Արիստակեսին անվանել են «Հոգևոր սուր»:
4) Ներսես Մեծին անվանել են նաև «Սրտերի լուսավորիչ»:
5) Աշխարհայացքն ունի միմյանց սերտորեն փոխկապակցված երեք աստիճան՝ աշխարհազգացողություն, աշխարհընկալում և աշխարհըմբռնում:
6) «Մի բնություն» բանաձևը պաշտպանելով, Հայոց եկեղեցին Քրիստոսի մեջ ընդունում է միայն աստվածային բնությունը՝ անխառն, անշփոթ:
7) «Վեհամոր ավետարանը» վանքում գտնվելու տարիներին, կնքվել է «Ծեր» և «Պահապան» անուններով:
8) Հայրենանվեր գործունեության համար Սահակ Պարթևին անվանել են «Հայոց հայր»:

54 **Բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

1) Ձեռնադրության խորհուրդը միշտ կատարվում է ժամերգության ընթացքում:
2) Հիվանդաց կարգն այն խորհուրդն է, որով սարկավագը հատուկ աղոթք է կարդում հիվանդի համար, որպեսզի Աստծու օգնությամբ նա ապաքինվի և ստանա մեղքերի թողություն:
3) Հաղորդություն ստանալու համար անպայման պետք է մկրտված լինել:
4) Պսակադրության արարողության ժամանակ նորապսակների մատներին դրվող մատանիները խորհրդանշում են, որ նրանք ամբողջ կյանքի ընթացքում պետք է պահպանեն հավատարմությունը պսակադրության ուխտին:
5) Ապաշխարության խորհուրդը կարող է կրկնվել, ի տարբերություն Մկրտության և Դրոշմի խորհուրդների, որոնք միայն մեկ անգամ են կատարվում:
6) Դրոշմի խորհուրդը կատարվում է օրհնված ջրով:
7) Հաղորդությունը տրվում է հոգևորականի կողմից գինու մեջ թաթախված նշխարով, այն պատարագի արարողության առանցքն է:
8) Մկրտությունից անմիջապես հետո քահանան մյուռոնով օծում, դրոշմում է մկրտվածի զգայարաններն ու մարմնի որոշ մասերը:

55 **Հայաստանի Հանրապետության տարածքում գործող թեմերի վերաբերյալ բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Շիրակի թեմը ընդգրկում է ամբողջ Շիրակի մարզը:
2) Շիրակի թեմի առաջնորդանիստը Գյումրիի Յոթվերք Ս. Աստվածածին եկեղեցին է:
3) Տավուշի թեմի առաջնորդանիստը Իջևանի Ս. Ներսես Շնորհալի եկեղեցին է:
4) Կոտայքի թեմի առաջնորդանիստը Կեչառիսի վանքի Ս. Ստեփանոս Նախավկայի եկեղեցին է:
5) Արարատյան Հայրապետական թեմն ընդգրկում է Երևան և Էջմիածին քաղաքները:
6) Արմավիրի թեմի առաջնորդանիստը Բամբակաշատի Ս. Աստվածածին եկեղեցին է:
7) Արարատի թեմի առաջնորդանիստը Արտաշատի Ս. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցին է:
8) Գուգարքի թեմն ընդգրկում է Լոռու մարզը:

56 **Գտնել ճիշտ պատասխանները.**
Ս. Մովսես Գ Տաթևացու գործունեության արդյունքում՝

1) Վերաբացվեցին Սաղմոսավանքի, Հովհանավանքի և Տաթևի վանական դպրոցները:
2) Հայ ազատագրական շարժման պատմության մեջ առաջին անգամ կաթողիկոսը օգնության խնդրանքով դիմեց Ռուսաստանի ցարին:
3) Կառուցվեց Երևանի Սուրբ Զորավոր եկեղեցին:
4) Պարսից շահից հատուկ հրովարտակ ստացավ, որի արդյունքում արգելվեց կաթոլիկ միսիոներների գործունեությունը Հայաստանում:
5) Վերացվեց աթոռակից կաթողիկոսների ինստիտուտը և վերականգնվեց Ամենայն Հայոց կաթողիկոսի միանձնյա իշխանությունը:
6) Արգելվեց Ս. Գրիգոր Լուսավորչի Աջի և այլ սրբությունների տեղափոխումը Սպահան:
7) Վերանորոգվեց Ս. Էջմիածնի վանքը, Վեհարանը, կառուցվեց Մայր Տաճարի գմբեթը, շրջապարիսպը և այլն:
8) Էջմիածնում հիմնադրվեց տպարան:

57 **Բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

1) X դարում ճարտարապետության մեջ հայտնվում է իր նշանակությամբ եզակի շենք՝ գավիթը, որը կից է եկեղեցուն:
2) Հայաստանի՝ մեզ հասած հնագույն եկեղեցիները հիմնականում անգմբեթ են՝ միանավ և եռանավ բազիլիկներ:
3) IX-XIII դդ. Հայկական եկեղեցիներին բնորոշ են իկոնոստասները:
4) XIII դարում հայկական ճարտարապետությունը թևակոխում է զարգացման նոր փուլ՝ սկսվում է գմբեթավոր, հիմնականում՝ կենտրոնագմբեթ եկեղեցիների կառուցումը:
5) XIII-XIV դարերում Հայաստանում ստեղծվել է եկեղեցական շենքի նոր՝ երկհարկ տիպը, որը եկեղեցին զուգակցում է զանգակատան հետ:
6) Ս.Հովհաննես Օձնեցու կանոններով եկեղեցու հատակագիծը գծվել է գետնին, 12 առաքյալներին խորհրդանշող 12 քարերով նշվել են եկեղեցու անկյունները և քարերն օծվելուց հետո սկսվել է շինարարությունը:
7) X-XI դարերում ստեղծվել է եկեղեցական շենքի նոր՝ ներգծված խաչ տիպը:
8) Հայկական եկեղեցիների հատակագծում խորանը և ավանդատները շրջանաձև են:

58 **Ստորև թվարկվածներից որո՞նք պատմական իրադարձությունների իրական պատճառ կամ հետևանք չեն.**

1) Մարդկանց գիտակցության մեջ հեթանոսական աստվածների և կուռքերի նկատմամբ հավատի աստիճանաբար թուլացումը և նոր կրոնի՝ մեկ ճշմարիտ Աստծո հանդեպ հավատ, մարդկանց և ժողովուրդների հավասարություն, ներողամտություն, սեր և այլն քարոզելը I դարում Հռոմեական կայսրությունում քրիստոնեության տարածման հիմնական պատճառներից են հանդիսացել:
2) Հայ նախարարների միջնորդությունների և ճնշումների պատճառով 432 թ. պարսից արքան կաթողիկոս Սահակ Պարթևին ազատել է աքսորից և թույլատրել վերադառնալ Հայաստան:
3) Քաղկեդոնի ժողովի որոշումները մերժելու նպատակով Բաբկեն Ա. կաթողիկոսի նախաձեռնությամբ 506 թ. Դվինում հրավիրվում է եկեղեցական ժողով:

4) Քանի որ հայրապետական աթոռը գտնվում էր Հայաստանից դուրս, Հաղպատի, Բջնիի և Տաթևի արքեպիսկոպոսությունները հրաժարվում են մասնակցել Շուղրիի ժողովին:
5) Նեստորի ուսմունքը դատապարտելու և մերժելու նպատակով 381 թ. Կ.Պոլսում հրավիրվում է տիեզերական ժողով:
6) Ներսես Ե. Աշտարակեցու մահից հետո Էջմիածնում հրավիրված ազգային եկեղեցական ժողովը Կ. Պոլսի պատրիարքության հետ հարաբերությունները ամրապնդելու նպատակով որոշում է կաթողիկոս ընտրել արևմտահայ եպիսկոպոսներից որևէ մեկին:
7) Վարազ Գրիգոր իշխանի դավադրական վախճանի պատճառով Դավթակ Քերթող բանաստեղծը գրել է մի ողբ, որը մնացել է Աղվանից աշխարհի պատմության մեջ:
8) Պլատոնի կարծիքով, քանի որ մարդն ապրում է հասարակության մեջ, այդ պատճառով անհատական բարիքը և երջանկությունը նրա համար հանդիսանում են վերջնանպատակ:

59 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառ կամ հետևանք.**

1) Կաթոլիկ քարոզչությունը մեծ ազդեցություն գործեց Եվրոպայի հայկական գաղթավայրերում, ինչի հետևանքով արդեն XVII դարում լեհահայերն ու հունգարահայերը կաթոլիկացվեցին, իսկ որոշ ժամանակ անց՝ ամբողջությամբ ձուլվեցին:
2) Լևոն II-ին այդպես էլ չհաջողվեց գրավել Անտիոքը, որովհետև վերջնիս աջակցում էին հարևան մահմեդական երկրները:
3) Ս. Էջմիածնում Հակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսի գլխավորությամբ հրավիրված ժողովը, Հայաստանն ազատագրելու նպատակով, որոշում ընդունեց օգնության խնդրանքով դիմել Եկատիրինա I կայսրուհուն:
4) Արևմուտքից օգնություն ստանալու նպատակով 1547 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Ստեփանոս Ե. Սալմաստեցի կաթողիկոսը հրավիրեց առաջին խորհրդաժողովը:
5) Կրոնական-քաղաքական բաժանումների և անհամաձայնությունների հետևանքով Հռոմկլեայի Հայոց կաթողիկոսությանը չհաջողվեց վերականգնել իր իրավունքները և 1254 թ. տեղափոխվեց Ծոփք:
6) Հռոմի պապից և Բյուզանդիայից օգնություն ստանալու ակնկալությամբ Հեթում II թագավորն ու Գրիգոր Է. Անավարզեցի կաթողիկոսը փորձում էին Հայոց եկեղեցում ծիսական և դավանաբանական փոփոխություններ կատարել:

7) Չնայած Հայոց եկեղեցին իրեն ենթարկելու երկխոսություններն ու մտադրությունները հաջողությամբ չպսակվեցին, Բյուզանդական կայսրը ստիպված եղավ ճանաչել Հայոց թագավորությունը և թագ ուղարկել Լևոն II-ին:
8) Նահապետ Ա. Եդեսացի կաթողիկոսը չէր խրախուսում Հովսեփ Էմինի, Մշո Ս. Կարապետ վանքի վանահայր Հովնան վարդապետի և մյուս գործիչների Հայաստանի ազատագրության ուղղությամբ գործադրած ճիգերը, զգուշանալով հարվածի տակ դնել Մայր Աթոռն ու հայությանը:

60 **Մկրտիչ Խրիմյանի կյանքի և գործունեության հետ կապ ունեցող իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Մկրտիչ Ա. Խրիմյանը Սինոդին կարգադրեց եկեղեցապատկան հողերի և գույքի բռնագրավման մասին օրենքը չհրապարակել հայկական մամուլում:
2) Մկրտիչ Խրիմյանը և Կ.Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը կազմեցին «Գավառահայ հարստահարությունների բողոքագիրք» և հանձնեցին Կ. Պոլսի ռուսական, անգլիական և ֆրանսիական դեսպաններին:
3) Մկրտիչ Ա. Խրիմյանի հրահանգով Գանձակի հոգևոր փոխանորդ Կյուրեղ վարդապետը և քաղաքագլուխ Գ. Տեր-Պետրոսյանը դիմեցին Կովկասի փոխարքային՝ թույլտվություն խնդրելով հայերից ժողովրդական միլիցիայի ջոկատներ կազմելու համար:
4) Մկրտիչ Ա. Խրիմյանը հատուկ կոնդակով բոլոր թեմերից պահանջեց քաղաքացիական իշխանություններին չհանձնել իրենց ունեցվածքը:
5) Մկրտիչ Խրիմյանի նախագահությամբ կազմված պատվիրակությունը մեկնեց Բեռլին՝ արևմտահայության դատը պաշտպանելու նպատակով:
6) Սասունի ապստամբության ժամանակ Մկրտիչ Ա. Խրիմյանը հայ հոգևոր առաջնորդների միջոցով դիմումներ ներկայացրեց մեծ տերությունների ղեկավարներին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով Արևմտյան Հայաստանում ստեղծված իրադրության վրա:

61 **Իրադարձությունները դասավորել ժամանակակգրական հաջորդականությամբ.**

1) Աստծո կողմից 10 պատվիրանների հայտնումը Մովսեսին
2) Երուսաղեմի տաճարի կառուցումը
3) Դավիթ թագավորի կողմից Երուսաղեմի հռչակումը մայրաքաղաք
4) Իսրայելցիների ազատումը եգիպտական գերությունից
5) Հուդայի մայրաքաղաք Երուսաղեմի գրավումը Բաբելոնի թագավորության կողմից
6) Սավուղի հռչակումը իսրայելցիների թագավոր

62 **Հիսուս Քրիստոսի կյանքի հետ կապ ունեցող իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Բեթանիայից Հիսուսի և աշակերտների ուղևորությունը Երուսաղեմ
2) 12 աշակերտների ընտրությունը Հիսուս Քրիստոսի կողմից
3) Հիսուս Քրիստոսի մկրտությունը
4) Հիսուսի, Մարիամի և Հովսեփի բնակության հաստատումը Նազարեթում
5) Հիսուս Քրիստոսի Պայծառակերպությունը
6) Հիսուս Քրիստոսի կողմից աշակերտների ոտքերի լվացումը
7) Հիսուս Քրիստոսի առանձնացումը անապատում

63 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Ս. Հովհան Օձնեցու նախաձեռնությամբ պավլիկյանների դեմ պայքարի ծավալումը
2) Քրիստոնեական եկեղեցու երկրորդ մեծ բաժանումը
3) Խաչափայտի ազատումը գերությունից
4) Վրաց եկեղեցու անջատումն Արևելյան եկեղեցական ընտանիքից
5) Սևանի կղզու Ս. Առաքելոց և Ս. Աստվածածին եկեղեցիների կառուցումը
6) Երուսաղեմի հայոց պատրիարքության հիմնադրումը
7) Աղթամարի Ս.Խաչ եկեղեցու կառուցումը

64 **Հայոց կաթողիկոսի անունը համապատասխանեցնել իրեն ժամանակակից արքայի անվանը.**

ա) Սարգիս Ա. Սևանցի
բ) Գրիգոր Զ. Ապիրատ
գ) Գևորգ Բ. Գառնեցի
դ) Կոստանդին Ա. Բարձրբերդցի
ե) Անանիա Ա. Մոկացի
զ) Սահակ Ա. Պարթև
է) Ներսես Ա. Պարթև

1) Հեթում I
2) Աբաս Բագրատունի
3) Գագիկ I Բագրատունի
4) Աշոտ I Բագրատունի
5) Վռամշապուհ
6) Լևոն II Մեծագործ
7) Պապ Արշակունի

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

65 **Մեջբերված հատվածը համապատասխանեցնել հեղինակի անվանը.**

ա) «Ես միշտ էլ հավատացել եմ իմ ժողովրդի ոգուն: Ես գիտեմ նրա անցած ճանապարհի դառնությունները: Ես համոզված եմ նաև, որ ազգն իմ հայոց անարգ թշնամուն դեռ չի ասել իր վերջին խոսքը: Եվ խոսքն այդ պիտի լինի հաղթական»:

բ) «Հայրենակիցներ, եղբայրներ և որդիներ, հին դարերում, երբ հայոց զորքը պատրաստվում էր գնալ թշնամու դեմ, նրա հրամանատարները գալիս էին Էջմիածին՝ Կաթողիկոսի մոտ՝ նրա աջը համբուրելու և օրհնությունը ստանալու: Բայց այս անգամ վտանգն այնքան մեծ է և ահավոր, որ ես ահա Ս. Էջմիածնից եկել եմ ձեր բոլորի ձեռքը համբուրելու, որ փրկեք հայրենիքը ..փրկեք ձեր պատիվը, հայի պատիվը...»:

գ) «Բարոյական առողջ սկզբունքներէ հեռացած ազգ մը ո՛չ հողով կը փրկուի եւ ո՛չ ալ բանակով: Բարոյական անկումը նախադուռն է մարդոց եւ ազգերու կործանման, պատճառը՝ խռովութեան ու պատերազմի, քանդումի եւ

աւերածութեան»:

դ) «. . . Անցյալի պատմությունը մի լուսավոր լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփեն անմոլոր գնալու համար»:

ե) «Քրիստոսեն ալ հին, Մովսեսեն ալ, իմ թշվառ ազգը: Անտեսված այս թանկարժեք հնությունը՝ հին քար մը կամ առարկա մը փնտրելու կելլեք»:

զ) «Մարդը չպիտի մտածե աշխարհից բան տանելու մասին, այլ աշխարհում բան թողնելու մասին: Մնացածը ունայնություն է»:

է) «Մի՛ երազիր թագ ու ամրոց,
Մի՛ հղփանա աշխարհում.
Լավ իմացիր՝ փոքր աղբյուրից
Մարդ հանգիստ է ջուր խմում»:

1) Ավետիք Իսահակյան
2) Մկրտիչ Ա. Խրիմյան
3) Գարեգին Հովսեփյան
4) Գարեգին Ա. Սարգսյան
5) Հովհաննես Շիրազ
6) Հովհաննես Թումանյան
7) Գևորգ Ե. Սուրենյանց

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է